

## Վիկտոր Յամբարձումյան

20-րդ դարի մեծագույն գիտնական, աստղաֆիզիկոս, տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից: ՀՀ ազգային հերոս, Սոցիալիստական աշխատանքի կրկնակի հերոս, Ստալինյան մրցանակի կրկնակի դափնեկիր:



Ծնվել է 1908թ. Թիֆլիսում, մտավորականների ընտանիքում:

1924թ. ընդունվել է Սանկտ Պետերբուրգի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական ֆակուլտետ, մեկ տարի անց տեղափոխվել տեղի պետական համալսարան:

Դեռ ուսանողական տարիներին հրատարակել է արեգակնային ճառագայթներին վերաբերող իր տեսությունը: Ուսումը շարունակել է Պուլկովոյի աստղադիտարանին կից ասպիրանտուրայում, այնուհետև աշխատել է Լենինգրադի (Ս. Պետերբուրգի) համալսարանում, որտեղ էլ հիմնել է աստղաֆիզիկայի ամբիոն:

1934-41թթ. ղեկավարել է Լենինգրադի համալսարանի աստղադիտարանը:

1943թ. վերադարձել է հայրենիք և նշանակվել ԳԱ փոխնախագահ, այնուհետև ընտրվել է ԳԱ նախագահ և պաշտոնավարել 1947-93թթ.:

1946թ. Բյուրականում հիմնել է Հայաստանում առաջին աստղադիտարանը և ղեկավարել այն մինչև 1988թ.:

1961-64թթ. նախագահել է Միջազգային աստղագիտական միությունը: Երկու անգամ ընտրվել է Գիտական միջազգային միությունների խորհրդի նախագահ:

Հեղինակ է սկզբունքորեն նոր՝ տիեզերածնական հայեցակարգի:

1947թ. ընտրվել է ԽՍՀՄ Գերագույն խորհրդի պատգամավոր:

Մահացել է 1996թ.:

Վիկտոր Յամբարձումյանի անունն է կրում 1972թ. հայտնաբերված 1905 փոքրիկ մոլորակը: Նրա ծննդյան օրը՝ սեպտեմբերի 18-ը, Հայաստանում հռչակվել է աստղագիտության օր:

Պարգևատրվել է ՌԴ պետական մրցանակով, ԽՍՀՄ ԳԱ Լոմոնոսովի անվան ոսկե մեդալով, Խաղաղօվկիանոսյան և Բրիտանական թագավորական աստղա-

գիտական ընկերությունների ոսկե մեդալներով, Բեռլինի ԳԱ Յեմիոլցի անվան մեդալով և բազմաթիվ այլ պարգևներով: